Հավելված 1.

Կորպորատիվ Կառավարման Հայտարարագիր

2017 թ.

Նկարագրական մաս

Ընկերության անվանում	**"Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր" Փակ Բաժնետիրական Ընկերություն**
Հասցե	**Ք. Երևան, Աբովյան 27**
Ինտերնետային կայք	www.energyoperator.am
E-mail:	office@energyoperator.am

1. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Ներածական խոսքում համառոտ ներկայացվում է հաշվետու տարում Ընկերության կորպորատիվ կառուցվածքը և դրա բարելավման նպատակով ձեռնարկված քայլերը:

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն Ընկերության կանոնադրության և կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով

բ) Խորհուրդ

գ) Գործադիր մարմին

Ընկերության խորհուրդը չի ստեղծել խորհրդի հանձնաժողովներ: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված է նրա կողմից և կառավարվում է ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի կողմից: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1 872 043 640 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասուներկու միլիոն քառասուներեք հազար վեց հարյուր քառասուն) դրամ, որը կազմում է 309.941 (երեք հարյուր ինը հազար ինը հարյուր քառասունմեկ) հատ

հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի արժեքը 6040 (վեց հազար քառասուն) դրամ:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

1. Հաշվետու տարում (2017 թվական) գումարվել են մեկ տարեկան և մեկ արտահերթ ժողովներ: Բոլոր ԲԸԺ–ները գումարվել են Ընկերության գլխամասային գրասենյակում (ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն):
2. Տարեկան ընդհանուր ժողովը անցկացվել է 26.06.2017թ.:
3. ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերը ԲԸԺ-ի մասին ծանուցվել են փոստով 21 օր առաջ: Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են փոստով: Օրակարգի և ԲԸԺ-ին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանված է Ընկերության կանոնադրությամբ (հոդված 11.5 կետում):
4. Բաժնետերը հնարավորություն է ունեցել ԲԸԺ-ին մասնակցել լիազորված անձի միջոցով: Լիազորագրի ձևերը, Ընկերության կանոնադրության 11.4 հոդվածով սահմանված կարգով, հասանելի է եղել բաժնետիրոջը:
5. Բաժնետերը կումուլյատիվ քվեարկությամբ չի քվեարկել, քանի որ բաժնետերը մեկն է:
6. Տարեկան ԲԸԺ-ի օրակարգը, լիազորագրի ձևը, քվեարկության արդյունքները և նիստի արձանագրությունը հասանելի են եղել Ընկերության ինտերնետային կայքում:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի գործառույթները

Կանոնագրքի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության 13.5 հոդվածը սահմանում է խորհրդի բացառիկ իրավասությունները: Խորհրդի պատվիրակված իրավասություններ չեն սահմանվել:

Խորհրդի կազմը

Ներկայումս Ընկերության խորհուրդը բաղկացած է 14 անդամներից, որոնցից տասերեքը ոչ գործադիր են: Խորհրդի կազմում անկախ անդամ չկա:

Խորհուրդ						
	Պաշտոնը	**Անուն, ազգանուն**	**Գործադիր**	**Ոչ գործադիր**	**Անկախ**	**Խորհրդի անդամ է սկսած՝**
1.	Նախագահ	Կ.Ղահրամանյան		ոչ գործադիր		12.2016թ.
2.	Անդամ	Ռ. Դավթյան		ոչ գործադիր		09.2016թ.
3.	Անդամ	Ա.Հարությունյան		ոչ գործադիր		06.2014թ.
4.	Անդամ	Մ. Ջալալյան		ոչ գործադիր		12.2016թ.
5.	Անդամ	Ռ. Խաչատրյան		ոչ գործադիր		10.2017թ.
6.	Անդամ	Մ. Վարդանյան		ոչ գործադիր		12.2015թ.
7.	Անդամ	Կ. Հարությունյան		ոչ գործադիր		10.2015թ.
8.	Անդամ	Վ. Խաչատրյան		ոչ գործադիր		08.2016թ.
9.	Անդամ	Ս.Խաչատրյան		ոչ գործադիր		12.2016թ.
10.	Անդամ	Ա.Գրիգորյան		ոչ գործադիր		02.2011թ.
11.	Անդամ	Ա. Հովսեփյան		ոչ գործադիր		09.2016թ.
12.	Անդամ	Մ.Մնացականյան	գործադիր			01.2008թ.
13.	Անդամ	Ս. Պետրոսյան		ոչ գործադիր		09.2016թ.
14.	Անդամ	Ե. Ազոյան		ոչ գործադիր		09.2016թ.

1. Խորհրդի մեկ գործադիր անդամը Ընկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձ է:
2. Համաձայն Կանոնագրքի, խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

Խորհրդի անդամների համառոտ կենսագրությունները, նրանց գործառույթների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են Ընկերության տարեկան հաշվետվությունում:

Խորհրդի աշխատանքի գնահատումը

Խորհուրդը չի ընդունել գնահատման քաղաքականություն:
Խորհուրդը չի իրականացրել ինքնագնահատում:

5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:

Աուդիտի հանձնաժողով

Խորհուրդը աուդիտի հանձնաժողով չի ստեղծել:

6. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության գործադիր մարմինը հանդիսանում է գլխավոր տնօրենը:

Գործադիր մարմնի (գլխավոր տնօրենի) համառոտ կենսագրությունը, ինչպես նաև նրա գործառույթների և պարտականությունների մանրամասները ներառված են Ընկերության տարեկան հաշվետվությունում:

7. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Խորհրդի կողմից Ընկերության ներքին աուդիտ չի նշանակվել:

8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Խորհրդի կողմից Ընկերության կորպորատիվ քարտուղար չի նշանակված, սակայն նրա պարտականությունները մասնակիորեն կատարում է խորհրդի քարտուղարը համաձայն խորհրդի գործունեության կանոնակարգի (խորհրդի նիստերի հրավիրում, նիստին ներկայացվող փաստաթղթերի նախապատրաստում, արձանագրության վարում և այլն):

9. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերությունը 2017թ. արտաքին աուդիտ է ընտրել մրցութային կարգով, որը հաստատվել է ԲԸԺ-ի կողմից համաձայն՝ "Բաժնետիրական Ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 67 հոդվածի 1-ին կետի Ժա ենթակետի, իսկ նրա վարձատրության չափը սահմանել է Ընկերության խորհուրդը՝ համաձայն "Բաժնետիրական Ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 84 հոդվածի 1-ին կետի Ժբ ենթակետի:

10. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության 2017թ. տարեկան հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովում՝ 2018թ. հունիսի 25 -ին:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված ողջ տեղեկությունները, բացառությամբ 2-րդ կետի դ; է; ը; թ ենթակետերի և տեղադրված է Ընկերության ինտերնետային կայքում՝ www.energyoperator.am

E-mail: office@energyoperator.am